

նույնիսկ զոյնովն ներկուած: Ուստի ներկին պատմական և ժողովրդական հասկացողութիւն մը լինելով, չէր կարող Յովհան Մանգակունի անտեղեակ մնալ անոր կիրառութեան, մասնաւոր ինքն որ հոգին էր ապստամբութեան և խրախուսելի վահանին և ընկերաց. որոց բախտախնդրութեանց մասնակից, իւր անձն վտանգի ենթարկելով, վերաւորուած կիսամեռ կ'ինկնայ պատերազմի դաշտի վրայ: Ս. Հայրապետը Ռիտապահ ապստամբելոց տառապալից օրերուն անբաժան ընկերը, վերջապէս ունեցաւ նաև այն մեծ միութարութիւնը՝ որ իւր օրով տեսաւ կրօնքի յաղթանակն, վահանի փառքը, Հայաստանի ազատութիւնը և երջանկութեան օրը: Այնուհետև Մանգակունին ինքզինքը նուիրեց իսպառ իւր հօտը սրբելու մարգելու սրբապալիճ պաշտամունքներուց և ընդունել Եկեղեցւոյ գիրիւղ դասալիք և ուրացողներու մեծամասնութիւնը, բժշկել անոնց շարաւալից վէրքերը, հաստատել ուղղափառ դաւանութեան մէջ: Ս. Հայրապետս իւր ունկնդիրներէն շատերը կը ճանաչէր, թէ՛ մեծամեծներէն և թէ ստորին դասէն, և ի դէպ յիշած է Ս. Լուսաւորչի տեսլիքը, և բացատրած անոր խորհրդական միտքը՝ վերաբերելով իւր ժամանակի անցքերուն: Հայրապետիս հրապառ խօսքերը, յորդորները՝ կը փարատեն դարձողներու մտքէն և սրտէն մոգեբու անտի ուսումն և վարդապետութիւնը, որով առժամանակ մի «Նիկիական անմտաբեկութիւն» (Աղաթ. Մկր.) Աստուծոյ հետ հաշտուելու միակ միջոցն աղօթքն է, ուստի առ նա դիմողներու կ'ըսէր. «Միայն անդադար աղօթիւք ժտեա՛ առ Աստուած, և զխաւար մոլորութեանն լուսաւորէ. զաղտեղութիւն պղծութեան մեկաց և զտիղմ ցանկութեանն ցամաքեցուցանէ: Զի յորժամ ԱՆՆԵՐԿ հաւատով յամենայն սրտէ աղօթես առ Աստուած, ընդունիս մեղաց թողութիւն և յանցանաց բաւութիւն: (Էջ 28, 1830):

Ասկից կ'ընթացատրեմ թէ ինչով Հորոյ իւր անհասկացողութեան չափաբեղն տուաւ իւր իսկ գրած հետագայ տողներուն մէջ.

«Սոսկալի, անքաւելի մեղք է, չըսեմ անմտութիւն, ի՞նչ դաւուն Ս. Ղազարու վանքին մէջ — անոր ամենէն պայծառ օրերուն — զիտութեամբ և ոչ վրիպակաւ տպել «ԱՆՆԵՐԿ հաւատը»: Վասն զի ինքն «վրիպակաւ և ոչ զիտաբեկութեամբ», կը խօսի զոր ոչ զիտէ և պէտք ունի լուսաւորուելու. բայց Հորոյ որովհետեւ ուրացող մը չէ, յուսանք, և սեւ զոյնով ներկուած չէ, իրեն ալ Մանգակունին կը պատուիրէ երկու բան, ադաւառք և ուղօք. «Թէ՛ պէտ և երկիկալ ներկեցար ի սևաթոյր ամբարշտութիւնս քո, այլ մերձեցիր առ Քրիստոս ջերմեանդն արտասուօք, և լուսաւորեալ պայծառացուցանէ զքեզ»: Իսկ անկեղծ աղօթքի ներգործութիւնն է. «Զի որք միամիտ մտօք և անեկեզ հաւատովք աղօթեն առ Աստուած և խնդրեն զբարին, ընդունին զինդիրս ամենայն»։ (Էջ 27, 1830): Արդարեւ մեծ բարիք մը ընդունած կ'ըլլայ Հորոյ՝ եթէ Աստուած լոյս տայ մտքին և համ զնէ անհամ բերին:

Լ. Գ. ՆԱՀԱՊԵՏԻԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐԱԳԻՏ ՔԱՆԴԱԿԱՊԱՏԿԵՐԲ ՄԵՐ ՓՐԿՁԻՆ

(Շար. տես թագմ. 1924 էջ 273)


Զ. ՔԱՆԴԱԿԱՊԱՏԿԵՐԲ:

Այս տեղ յառաջի ենք ածում Դր. Այսնի մէկ գծագրութիւնն (Diagram) ցուցանելով քանդակեալ տասներկու պատկերքն, որոյ ի ներքոյ տեսանելի 1 մինչև 12 թուանշանքն զետեղեալ են ի դիւրութիւն բացատրութեան: Յարգոյ Հիգինական բոլորովին հաստատամիտ է որ համայն պատկերքն վաւերապէս իսկական են և քանդակեալ՝ յորժամ ներկայացուցեալ սրբապառ անձնաւորութեանց բազումը զեռ կենդանի էին: Եւ եթէ այդպէս ուրեմն, ըստ մեր խոնարհ կարծեաց, եթէ արուես-

տագործն հասակաւոր ոմն էր՝ թերեւս ան-
ձամբ տեսած զՓրկիչն իսկ ի կենդանու-
թեան:

Երկու խումբ են բաժանուում քանդա-
կապատկերքն, վեց առ իւրաքանչիւրն:
Առաջին խումբն, առ յանդիման, բովան-
դակում է Քրիստոս զկնի Յարութեանն և
հինգ Առաքեալք: Երկրորդ խումբն, առ
հակառակ կողմն, Քրիստոս ի ժամանա-
կի իբր երկոտասանամեայ պատանեկու-
թեանն, չորս Աւետարանիչքն և Առաքեալ
մի: Քրիստոսի երկու պատկերաց նոյնու-

յարէ Դր. Այսըն. «Հիանալի դէմք է,
որոյ նմանն ու է արուեստագործ բնա-
կարող եղած չէ ստեղծել յերևակայու-
թենէ»: Նուրբ և փափուկ կազմիւ, ար-
կեալ է պատմունճանաւ հոռվմէականաւ
(Toga), բնական ծալիւք յարդարեալ:
Սուրբ Հոգին, թեատարած, սաւառնում է
աղանակերպ Գլխոյն ի վեր, որոյ կից
ընդ կատարի աջ թևոյն՝ և խորհրդանիշ
Սուրբ Դննդեանն, փայլում է Աստղ մի
ընդ մէջ երկուց ի վարդից եղբայարար
վարդեգօտայն: Հուպ ընդ ծայրից մա-



ՔԱՆԿԱՎԱՊԱՏԵՐ ԱՆՏԻՈՓՈՅ ՄԵՆ ՍԿԻՆԻՆ

Diagram of the Chalice* [International Copyright by Kouchakji Frères, New York].

թիւնքն հաստատեն դիւրին էր, բայց ոչ
միւս տասանցն. սակայն Դր. Այսըն, ութ-
ամեայ մանրակրկիտ ուսումնասիրութեամբ,
յաջողեցաւ, անհերքելի փաստաբանու-
թեամբ, մի առ մի ապացուցանել թէ ով
որ էին այդորիկ անձնաւորութիւնք:

Առաջին խումբ: Քրիստոս ի կեդրոնն
որպէս Փրկիչ՝, բազմեալ յԱթոռ փառաց,
բազկատարած՝ խաչածե, ոտքերն հանգ-
չեալ ոտնահանգստի վերայ: Անմօրոս
է, հերքն ողորկ և կարճ, ալսինքն՝ առանց
երկայնեալ վարսից: Լայն ճակատիւ, խո-
րաթափանց աչօք, անթարթափ հայեցուա-
ծովը ուղղեալ առ դէմ յանդիման: Ի վեր
ջան զամենայն ամենագրաւիչ է դիմաց
արտայայտութիւնն. ժպիտ ի շուրթն խո-
նեալ ընդ ոգեկան լրջութեան, առ որ

տանց աջ ձեռին Քրիստոսի, զոյ պնակ մի
կրիւով զծօթն նկանակաւ և զերկու ձկունս,
և առ երի աջ ծնգան գառն մի կանգուն՝
յետադարձ հայեցմամբ առ Քրիստոս: Առ
ի խոնարհ, ի ներքոյ ոտնահանգստին,
պատկերեալ է Արծիւ մի մեծ թևատարած,
որոյ ճիւղանաց ներքոյ տեսանելի է զամ-
բիւղ մի լի հացիւ, և որ Արծիւ, ըստ Դր.
Այսընի, խորհրդանիշ համարելի է Հոռվ-
մայ կայսրութեան և համայն զաղափարն՝
զերիշխանութեան երկնային՝ ի վերայ եր-
կուսուր թագաւորութեանց: Փրկչին պատ-

* Յօդուածին նախընթաց մասին մէջ (տես Բգմ. Օգ.)
Սկիւնի քիշիին տակ սխալմամբ կրկնուեր էր ճիշդ այս
բացատրութիւնը, մինչև ասոր անդ հոն պիտի ըլլար «The
great chalice of Antioch» և այլն (Ս. Խ.)

կերին յաջակողման, առ խոնարհ, և հուպ ընդ աջ թևոյն Արծառն տեսնում ենք Սուրբ Պետրոս՝ մերձաւորապէս նման նոյն Սուրբն պատկերին տեսանելի ի ներք-նանկուլան Հոովմայ, Առ առաւել ապա-ցոյց՝ Սուրբ Պետրոսի Աթոռին վերայ նըշմարելի են երկու քերուածագիծ (*graffio*) կարճ ձողեր՝ խոտորնակի խաչածեւ, ի նշան բանաւեացն։ Ուրեմն՝ Արծառն առ երի, և դէմ յանդիման Սուրբ Պետրոսին, պէտք է լինի միւսն յերկուց գլխաւոր Առաքելոց, Սուրբն Պողոս⁵, պատկառելի, իրաւախոհ և իշխող դիմօք, Փրկչին տա-րածեալ աջ ձեռին առ դէմ՝ տեսնում ենք զգաստերես և գեղեցիկ մարմնոյ կազմիւ անձնաւորութիւն մի¹², որոյ թեթև տարազն ըլլողովն տարբեր է միւս մետաքսնից տարազից։ Աւանդութիւն է թէ Սուրբ Յա-կորոս կրտսերն, արհամարհելով ասուե-գործ հիւսուածք, ամառ և ձմեռն միշտ հագնաւում էր նորահիւս կտաւեայ հագուստ։ Ուրեմն՝ այս է սուրբ Կալորոս, Եղբայր Քրիստոսի, և առ ձախ ձեռին Փրկչին՝ միւս մերձաւոր ազգականն Քրիստոսի ի յերկրի, Սուրբն Թադէոս՝ որ նա ևս գի-տելի է որպէս St. Jude, Առերի Սուրբ Պողոսին, տեսնում ենք վեհապանծ և ու-ժեղատեսիլ և ծիրազոյն բան զամենայն, Սուրբն Անդէաս՝ եղբայր Սուրբն Պետրոսի, որոյ բերէ և կերպարանաց նմանութիւն, և որ առաջինն եղև ի կոչումն յԱռաքե-լութիւն։

Երկրորդ խումբ։ Քրիստոս ի կեդրոն՝ ի ժամանակի պատանեկութեանն⁸, զիմա-գիծն յար և նման պատկերին որպէս փրկիչ⁹։ Աջ բազուկն գոյ տարածեալ և ի ձախ ձեռին ունի զՏումար մի (Scroll) պարունակելով զՆոր Որէնս (Էւանգելիսիոս), առ որ Դր. Այստն յարէ թէ Քրիստոս, այս տեղ, խորհրդարար ցոյց է տալ Որի-նաց Տումարն չորեքն Աւետարանչացն նստեալ շուրջ զիրեւ՝ որպէս թէ այդու մարգարէանալով իւր իսկ ապագայ Առա-քելութիւնն։ Յարգոյ Հեղինակն հանդիպե-ցաւ զԺուարին խոչընդոտից՝ այս խորին մէջ պատկերացեալ միւս հինգ անձնաւոր-

ութեանց նոյնութիւնքն վաւերականապէս հաստատելոյ, բայց վերջ ի վերջոյ, իւր անձանձիւր և երկարատե քննողութիւնքն յաջողապէս պատկեցան։ Առաջին բանալին⁶ պարզեց պատկերն որ առ աշակողման Պատանեկին Քրիստոսի՝ իւր դասական կիրարկութեամբ, նա մանաւանդ որ, Թո-ղեալ Քրիստոսի երկու յայտնի կենդա-նագիրքն, այս մէկն մի միայն տարբերու-թիւնն էր կազմում ընդ համայն միւս ինն պատկերաց՝ իւր երկզպապատ և կարճ հե-րովք, ուստի և աներկբայորէն յունականն, մինչդեռ միւս ինունք կրէին զվարսս եր-կայնեալ առ կողմ պարանոցին, տիպարը հրէական։ Ապաքէն՝ այս պատկերն ներ-կայացնում է Սուրբ Ղուկաս Աւետարա-նիչն⁵, Եւ եթէ այդ այդպէս էր, ուրեմն միւս երեքն անմիջապէս շուրջ առ Քրիս-տոսիւ, ⁷, ⁸, ¹⁰ և պէտք է լինէին միւս երեք Աւետարանիչքն և ոչ համայնապէս Առա-քեալք։ Առ ի հաստատել զայս Դր. Այստն յառաջ ընթացաւ։ Ընդ մէջ Քրիստոսի և Սուրբ Ղուկասու, առ ի խոնարհ, պատ-կերացած է յաղթանդամ, լայնուս և հուժ-կու անձնաւորութիւն մի, խորտաբորտ, անոպայ և գեղջուկ կերպարանօք և, նկա-րագրականապէս, գերազանցօրէն Հրէա-կան։ Չափազանց հետաքրքրական է ա-թոռոյն վերայ քերուածապատկերն (*graffi*), ներկայացնելով ջրոյ թակոյկ մի։ Ըստ հին պատմագրութեանց Պատրիարգաց Ա-ղեքսանդրիոյ, Սուրբ Մարկոս¹ ջրակիր էր ի ժամանակի պատանեկութեան իւր, ուստի՝ պատկերացեալ մարմնոյ յաղթ կազմիւ — և վառն որոյ, սա ինքն է Սուրբ Մարկոս։ Վեհանձն և բարձրագոյն աստիճանի Աւ-տական դէմքն, դէմ յանդիման Սուրբ Մարկոսի, յայտարարէ զայն լինել Սուրբն Մատթէոս³, կրեկով բազպանած և յուսնով մի (phylactery) շուրջ ընդ աջ բազկաւ։ Այս տեղ, զարծեալ, աթոռոյն վերայ քերուա-ծապատկերն զայ յօգնութիւն առ ապա-ցոյց. կամար մի՝ ներկայացնելով դուռն քաղաքին և դրամ մի՝ ակնարկելով առ մաքսաւորութիւնն Սուրբ Մատթէոսի (Տէս, Մատ. Դւ. Թ. 9). — «Եւ անցեալ ընդ

այն Յիսուսի, ետես զայր մի զի նստէր ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն. և ասէ ցնա եկ զկնի իմ. և յարուցեալ զնաց զկնի նորայ)։ Առաքեալ և Աւետարանիչ, Սուրբ Յովհաննէս¹⁰, հեզահամբոյր և ստուեբախորհուրդ տեսօք, մանաւաղիտակի ներքոյ յայտնուում է կարի նմանօրինակ դէմք որպէս անմօրուս անձնաւորութիւնն աւերի ինքեան, ուստի այս վերջինն է, եղբայր իւր Սուրբ Յակոբոս, երկրքին՝ որդիք Զեքեղայ («Որդիք Ուրուտան»)։

Սուրբն Յովհաննէս հանգեալ ի Տէր իննսունեւչորս ամեայ հասակում յամին փրկչական 100, յընթացս կայսրութեան Տրայիանոսի (98—117)։ Ըստ Պողիկարպոսի և Էրանիոսի, Սուրբ Յովհաննէս զրեց Զորրորդ Աւետարանն յԵփեսոս, զրեթէ նոյն ժամանակ որպէս իւր Յայտնութիւնն, ի մէջ եօթնասուն և ութսուն ամաց հասակին։ Այս առնչութեամբ, որպէս և ի մասին Հնդինակութեանն, ի սկզբանէ անտի մինչ ցայսօր իսկ, անվերջ անհամաձայնութիւն և վիճուածն անպակաս եղած են ի մէջ Սուրբ Գրոց Մեկնարանից. սակայն՝ Անտիոքայ Մեծ Սկիհին վերայ Սուրբ Յովհաննէս պատկերն նոր լոյս մի է սփռում այս կնճոտ խնդրոյն վերայ, առ որ Դր. Այսըն այսպէս ասէ։ — «Սկիհին վերայ քանդակապատկերն, անտարակոյս միանգամ ընդ միշտ, վճռականապէս լուծուածն է այս խնդրոյն, յաջողակ Սուրբ Յովհաննէս Առաքելոյն»։ «Ունեակարեւոր փաստն», յարէ նա, «հիմնեալ է Միւրատորեան կանոնի» (Muratorian Canon) վկայաբանութեան վերայ, որ ասէ՝ «Յայտնեցաւ Անդրէասի, մի Առաքելոց, թէ Յովհաննէս պարտէր, իւր իսկ անուն, պատմել զամենայն բանս»։ Այս աստիճանն բաւականապէս բացատրէ Անդրէաս Առաքելոյն ներկայութիւնն Սկիհին վերայ»։ Սովա՛. Դր. Այսըն կամի ցուցանել թէ Առաքեալն Սուրբ Յովհաննէս, ի լրումն Յայտնութեանն՝ ներշնչեալ ի Հոգւոյն Սրբոյ առ Սուրբն Անդրէաս, շարադրեց Զորրորդ Աւետարանն անդէն և

անդ կամ ոչ յետ քան յամի Տիառն 60 թուականն։ Եւ, գիտելի է որ Սուրբ Անդրէաս մարտիրոսացաւ յ30 Նոյեմբերի, յամի Տիառն 60։

Է. ՍԿԻՀԻՆ ԶԵՆԻՆ ԵՒ ԹՈՒՆԱԿԱՆՆ.

Սկիհին բարձրութիւնն է իբր 7 1/2 թրաշափ և ներքին տրամագիծն իբր 5 1/2 թրաշափ։ Առ ի զիւրին բացատրութիւն, կարելի է բաժանել զայն յերիս զուխս, այսինքն՝ Սկիհն ինքնին, ներքին բաժակն և պատուանդանն։ Սկիհին քանդակապատկերաց, իորհրդանշանաց և զարդարանաց մասամբ՝ արդէն յիշատակութիւն արարինք ըստ մեր սահմանափակ կարեաց։ Որպէս նեցուկ Սկիհին՝ տեսնում ենք փոքրիկ տափարակ ոտն կամ պատուանդան մի, ի մէջ որոյ և Սկիհի մայր բաժակին զոյգ զետեղեալ փոքրիկ գունտ մի արծաթեայ՝ խտածոյլ։ Սկիհին կերպէ է ձուածէւ Դր. Այսըն, ճարտարամաստ փաստաբանութեամբ և բազում օրինակօք, ապացոյցք է յառաջ բերում անմիջապէս նախ քան զԳերիստոս մինչև վերջ առաջին դարու, այսինքն՝ Յուլեան (Ն. Ք. 31 — 68. Յ. Տ.) և Փլաւեան (69—98. Յ. Տ.) Հարբստութեանց միջոցին՝ գիտելի նմին նման չափով և ձևով բաժակք, Հրէական և Յունա — Հռոմէական, որոց մի է, զոր օրինակ, թաւ մի գտանելի Բուկոնիայիին գանձուց մէջ՝ պատկերելով Սոստոսկայսըն երկիցս և զգետաւորեալ յար և նման պատմունճանաւ, որպէս Գերիստոս Անտիոքայ Մեծ Սկիհին վերայ։ Այսօրեւր օրինակք և փաստիւք, թէ՛ Դր. Այսըն և թէ՛ քննադատք հաստատում են որ այս տեսակ բաժակք պատկանում են միայն Առային դարուն, որով և վերջաւորելով Անտիոքայ Սկիհին թուականն Յ. Տ. 50, կամ ամենայնօրին՝ Յ. Տ. 70։ Գիտելի է, նաեւ, որ այս կերպիւ և ձևով բաժակք, ունելով շատ կարճ և նեղ պատուանդան, դժուարութիւն էին պատճառում ի մասին պահպանման հաւասարակշռութեանն, ուստի այս ձևն րաբիւփոխեցաւ երկրորդ դարու սկիզբէն։

Բ. ՆԵՐՔԻՆ ԲԱԺԱԿՆ՝

Սկիհին մէջ տեղաւորեալ ներքին բաժանի բաղկացեալ է անարուեստ և անյարարեալ արծաթեայ մետաղից և առանց ու և է զարդարանաց, առ որ Սկիհին մայր բաժանի ծառայում է որպէս պահարան։ Դր. Այսըն, իւր Մենագրութեան մէջ (Հատոր Ա.), նուիրում է երկու մասունք, նախ՝ սորին մանրամասն նկարագրութեանն (Part VII, էջ 131-136) ապա՝ արուեստին և աւանդութեանն (Part X, էջ 159-174)։ Արդեօք, ի՞նչ էր պատճառն որ այսպիսի մի հասարակատեսիլ և արուեստագուրկ բաժակ քաջ պահպանելոյ նպատակաւ, Առաքելոց ոմանց ղեռ կէնդանութեան ժամանակ պատրաստեցաւ այդպիսի մի սքանչելագործ Սկիհ, որպէս պատուական մասնատուի կամ պահարան, որ, ըստ արժանահաւատ Հեղինակին որպէս և քննադատից, ամենագեղեցիկ նշխար մի է թէ՛ ըստ սրբազնութեանն, թէ՛ ըստ գեղարուեստին, և թէ՛ ըստ ստուերական խորհրդեանն։ Յայտնի է որ հմուտ Հեղինակին նշանաբանն էր *Festina Lente*։ Նա չչտապեցաւ իւր ծանրաշխատ զննողութեանց մէջ, որով և իւր հաստատամիտ եզրակացութիւնն այն նշեց, թէ այդ ներքին բաժակն պէտք է լինի ոչ թէ արդիւնք երեւակայական ընդունելութեանց ալ, իւրօք, նոյն իսկ Սուրբ Թաան (« Holy Grail ») կամ Ըմպանակն որ Քրիստոս զործածեց յընթացս վերջին ընթրեաց, ի տնօրինութիւն Սուրբ Հաղորդութեան խորհրդոյն։

Ի վերջ բանիցս, պարտ անձին համարւի յայտնել որ սոյն Յօդուածոյս հետ հրատարակեալ երկու պատկերաց (այսինքն, The Great Chalice of Antioch, և The Diagram of the Chalice) ընդօրինակումն խորոյմիկն վերադասեալ և կուշտիկի նշարոյ, ի նիւտ Եօրկ։

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍՊԱՀԱՆԻ ԶԱՀԱՐԱՄԱՅԱԼ ԳԱԿԱՐԸ

(Աղբ-բերան — Պարտական աստուծոյն — ինչ)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 233)

Ը.

Ընտանեկան բարք ու սովորութիւններ և ալ ձեւեր. — Ընտանեք. — Տղարբք և կնուք. — Ծնունդ օր. — Կնուք, քառասունք, օրօրք, ամուսնիւն, անուններ. — Մանուկների զատարարութիւն. — Ամուսնութիւն և հարսանիք, հասակ, բաշխեցարժամ, աղջիկ ուղեւ, նշան դնել, հարստան, փեսատան, նշքներ, հարսանիքի բաղկանիքը — բարոյ կարէք, շօրմէվէք, նշան օխեւել, ծառ զօգել, հուսղլուք. — Արքի նշանագրութիւնն ու պատկարութիւնը. — Հիւանդութիւն և բժշկութիւն. — Մահ, Թաղում, մեռելք. — Գերեզմանատուն։

Բնութիւնք. — Սրտնից 50-60 տարի առաջ Զահարմահալի ընտանեկան կեանքն իր ներքին կազմակերպութեամբ եղել է խիտ նահապետական։ Գիւղացիներն սարկելիս են եղել մեծ գերդաստաններով, 50-60 հոգով։ Սակայն ժամանակի ընթացքում գերդաստանները քայքայել են և հին, նահապետական սովորութիւնները, վարք ու բարքերն անհետացել։ Այսօր ոչ միայն 50-60 հոգուց բաղկացած գերդաստաններ չկան, ալ և 15-20 հոգուց կազմած ընտանիքներ հազիւ երկու, երեք գիւղերում գոյութիւն ունին։ Այդ հանգամանքը պիտի վերագրել նախ՝ գիւղացիների տնտեսական դրութեան, և երկրորդ՝ հին և նոր սերնդի հայեացքների տարբերութեան։

Քայքայուող նահապետական գերդաստանի մէջ մեծ հայրը տան գլխաւորն է, որ առանձին յարգանք ու պատիւ է վայելում ընտանիքի անդամներից։ Նա կատարելապէս տէր է գերդաստանի բոլոր իրաւունքներին և ստացւածքին։ առանձին համաձայնութեան ոչ մի կորդադրութիւն չի լինում։ Նա է որդւում իր որդիների աշխատանքները և հոգում նրանց ծախսերը։ մի խօսքով նա կառավարում է ընտանիքը և նրա շահերը պաշտպանում խաների ու դատարանների առաջ։

Հօր մահից յետոյ ընտանիքի կառավարութեան ղեկին անցնում է գերդաստանի աւագ անդամին (կան ծնողներ, որ հէնց իրենց կենդանութեան ժամանակ ընտանիքի ղեկավարութիւնը յանձնում են մեծ որդուն և իրենք հանգստանում), սակայն նրան իշխանութիւնն ու իրաւունքները